

# ՍԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացնում է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ո՞ր կենդանիներն ունեն փակ արյունատար համակարգ.

- 1) տափակ որդերը
- 2) աղեխորշավորները
- 3) օղակավոր որդերը
- 4) միջատները

2

Ո՞ր շաբաթում են պատկերված միայն ողնաշարավոր կենդանիներ.



1) մեղուցա



խխունջ



ծովախևցողետին



ձուկ



շուն



կոկորդիլոս



օձ



խխունջ



թիթեռ



անձրևորդ



օձ



խխունջ



շուն



կոկորդիլոս



արջ



դելֆին

**3** Ի՞նչն է բնորոշ և սողունների, և թռչունների մեծամասնությանը.

- 1) կրկնակի շնչառությունը
- 2) ձվադրումը
- 3) տաքարյունությունը
- 4) քառախորշ սիրտը

**4** Ո՞ր կենդանին է տաքարյուն.



1) օձ



2) զորտ



3) կրիա



4) դելֆին

**5** Հետևյալ օրգանիզմներից ո՞րն է հանդիսանում օսմոկոնֆորմեր.

- 1) ծաղրածու ձուկը
- 2) դելֆինը
- 3) սաղմոնը
- 4) ծովապուտը


**6** Ո՞ր կենդանին մարմնի կայուն ձև չունի.

- 1) սպիտակ պլանարիան
- 2) հողաթափիկ ինֆուզորիան
- 3) կանաչ էվգլենան
- 4) սովորական ամերիկան


**7** Հետևյալ բույսերից ո՞րն է երկշաքիլավոր.

- 1) շուշան
- 2) խատուտիկ
- 3) խոլորձ
- 4) արմավենի

**8** Ո՞ր թվով են նշված խմորասնկերը.



**9** Նկարում պատկերված ո՞ր թիվն է ցույց տալիս հյուսվածքի այն տարատեսակը, որն ապահովում է արյան շրջանառության համակարգի կենտրոնական օրգանի աշխատանքը.




**10** Նեյրոնում էլեկտրական ազդակի հաղորդման ուղղությունը հետևյալն է.

- 1) բջջի մարմին- դենդրիտ - աքսոն
- 2) աքսոն - դենդրիտ - բջջի մարմին
- 3) բջջի մարմին - աքսոն - դենդրիտ
- 4) դենդրիտ - բջջի մարմին-աքսոն

11

Ո՞ր նկարում է պատկերված շարժուն միացումը.



1)



2)




3)



4)

12

Ստորև նշված նկարում, ո՞ր թվով է նշված երիկամի այն հատվածը որտեղով հեռացվում է մեզը.



13

Իմունիտեսի ո՞ր տեսակն է առաջանում ջրծաղիկով հիվանդանալու հետևանքով.

- 1) արիեստական ակտիվ
- 2) արիեստական պասիվ
- 3) բնական ձեռքբերովի
- 4) բնական բնածին


14

Մեզի մեջ շաքարի հնարավոր առկայությունը ստուգելու համար ո՞ր ֆերմետն է օգտագործվում.

- 1) հեքսոլինազ
- 2) լակտազ
- 3) զյուկոզ օքսիդազ
- 4) զյուկոզիդազ

15

Ստորև նշված նկարում ո՞ր թվով է ներկայացված ուղեղիկը.



- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

16

Որտե՞ղ են տեղակայված մարդու տեսողական ընկալիչները.

- 1) ծիածանաթաղանթում
- 2) ակնաբյուրեղում
- 3) ցանցաթաղանթում
- 4) եղջերաթաղանթում

17

Ո՞րն է քսիլեմով ջրի շարժման գլխավոր շարժիչ ուժը.

- 1) տրանսկրիպցիան
- 2) ածխաթթու զազի ներծծումը
- 3) լուսի կլանումը
- 4) տրանսպիրացիան

18

Ջրի վերաբերյալ հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.

- 1) ունի համեմատաբար բարձր ջերմակայունություն
- 2) ջրի մոլեկուլները ունեն շատ փոքր կոհեզիա
- 3) ծառայում է որպես փոխադրիչ արյան մեջ
- 4) հանդիսանում է լուծիչ

**19**

**Էկոհամակարգի ո՞ր գործառական բաղադրիչները կարող են լինել հետեւողություններ.**

- 1) կոնսումենտները և ռեդուցենտները
- 2) առաջին և երկրորդ կարգի պրոդուցենտները
- 3) պրոդուցենտները և ռեդուցենտները
- 4) պրոդուցենտները և կոնսումենտները

**20**

**Ինչպես է կոչվում օրգանիզմների հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու հատկությունը.**

- 1) ժառանգականություն
- 2) փոփոխականություն
- 3) գենոտիպ
- 4) ֆենոտիպ

**21**

**Ի՞նչ կապով են միանում բազմաշաքարի ենթամիավորները.**

- 1) գլիկոգինային
- 2) ջրածնային
- 3) պեպտիդային
- 4) կովալենտ

**22**

**Խոլեստերինի վերաբերյալ պնդումներից ո՞րն է սխալ.**

- 1) խոլեստերինի մոլեկուլների հիդրոֆոր հատվածներն օգնում են կանխելու թաղանթի միջով իոնների կամ քանային մոլեկուլների անցումը
- 2) խոլեստերինը շատ հանդիպում է նախակորիզավոր բջիջներում
- 3) խոլեստերինը մեծացնում է բջջաթաղանթի հոսունությունը՝ կասեցնելով դրա չափից դուրս կարծրացումը
- 4) խոլեստերինը կարևոր է թաղանթների մեխանիկական կայունության համար

**23**

**Վիսկինգի խողովակի մեջ լցուել են օպայի և գյուկոզի լուծույթների խառնուրդ:**  
**Խողովակը որոշ ժամանակով իշեցրել են եռացող ջրով լի փորձանոթի մեջ:** **Ի՞նչ է տեղի ունեցել:**

- 1) խողովակից դուրս դիֆուզիայի է ենթարկվել օպան
- 2) օպան և գյուկոզը դիֆուզիայի չեն ենթարկվել
- 3) խողովակից դուրս դիֆուզիայի է ենթարկվել գյուկոզը
- 4) օպան և գյուկոզը դիֆուզիայի են ենթարկվել

**24**

**Ինչպիսի՞ն պետք է լինի մարդու զիգոտի քրոմոսոմային հավաքակազմը, որպեսզի ծնվի արական սեռի առողջ երեխա.**

- 1) 44 առոտոսոմ + XY
- 2) 44 առոտոսոմ + XX
- 3) 22 առոտոսոմ + XY
- 4) 23 առոտոսոմ + XY

**25**

**Ո՞րն է ոչ կենսածին էկոլոգիական գործոն.**

- 1) արևի ճառագայթումը
- 2) մակարուծությունը
- 3) միջտեսակային մրցակցությունը
- 4) անտառահատումը

**26**

**Ո՞ր բջիջներն են կոչվում տոտիպոտենտ.**

- 1) սաղմնային ցողունային բջիջները
- 2) ոսկրածուծի ցողունային բջիջները
- 3) մաշկի բջիջները
- 4) բնային բջիջները, որոնք կարող են վերածվել որևէ այլ բջջի

**27**

**Հետևյալ շաքարներից, որը Բենեդիկտի փորձի ժամանակ կտա բացասական արդյունք.**

- 1) մալթոզ
- 2) սախարոզ
- 3) գյուկոզ
- 4) լակտոզ

**28**

**Ինչպե՞ս է կոչվում նուկլեոտիդային հաջորդականությունը, որն ազդանշում է տրանսկրիպցիայի սկիզբը.**

- 1) տերմինատոր
- 2) կոդոն
- 3) ինտրոն
- 4) պրոմոտոր

**29**

**Մեյոզի ո՞ր փուլում է տեղի ունենում գենետիկ նյութի «տրամախաչում».**

- 1) պրոֆազ I
- 2) թելոֆազ II
- 3) մետաֆազ I
- 4) անաֆազ II


**30**

**Բջջաթաղանթի կազմի մեջ չեն մտնում.**

- 1) գլիկոպրոտեիդներ
- 2) նուկլեինաթթուներ
- 3) Փոսֆոլիպիդներ
- 4) գլիկոլիպիդներ

**31**

**Նշել միտոզի փուլերի հաջորդականությունը.**



- 1) 1,4,3,2
- 2) 1,4,3,2
- 3) 1,3,4,2
- 4) 4,1,3,2

**32**

**Օպորտունիստական պոպուլյացաներին բնորոշ չէ.**

- 1) առաջին վերաբերությունը տեղի է ունենում կյանքի ուշ շրջանում
- 2) սերնդի կամ ձվերի չափը փոքր է
- 3) հասունացման ժամանակը կարճ է
- 4) կյանքի առավելագույն տևողությունը կարճ է

33

**Գել էլեկտրոֆորեզի ավարտից հետո գելի անցուղիներում գծիկների դասավորությունը ցույց է տալիս.**

- 1) գեների հաջորդականությունը որոշակի քրոմոսոմների երկայնքով
- 2) որոշակի գենի ճշգրիտ տեղակայումը գենոմային գրադարանում
- 3) հիմքերի հաջորդականությունը որոշակի գենում
- 4) ԴՆԹ-ի կազմում տարբեր չափերի կտորների առկայությունը

34

**Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ պարբերական կուլտուրայի դեպքում.**

- 1) կիրառվում է միկրոպրոտեինի արտադրության մեջ
- 2) օգտագործվում է պենիցիլինի արտադրություն ժամանակ
- 3) ոչինչ չի ավելացվում, միայն արտանետվող գագերն են հետացվում
- 4) ֆերմենտյորը մաքրելուց հետո կարող է օգտագործվել բոլորովին այլ գործընթացի համար

35

**Ինչպիսի ծնողական գենոտիպերի դեպքում է երկիիբրիդ խաչաներումից հետո, երկու ալելով ել ոչ լրիվ դոմինանտուրայան և գեների անկախ բաշխման դեպքում, ստացվում չորս ֆենոտիպային խումբ.**

- 1) AABB և AaBb
- 2) AABB և AAbb
- 3) AABb և aabb
- 4) AABB և aabb

36

**Էրիտրոպոյետինը.**

- 1) իլթանում է հակամարմինների արտադրությունը
- 2) ճնշում է արյան կարմիր բջիջների արտադրությունը
- 3) կարգավորում է արյան ճնշումը
- 4) իլթանում է արյան կարմիր բջիջների արտադրությունը

37

**Acidithiobacillus ferrooxidans կոչվող բակտերիան կարող է.**

- 1) մազնեզիումի սուլֆիդը վերածել մազնեզիումի սուլֆատի
- 2) այումինի սուլֆատը վերածել այումինի սուլֆիդի
- 3) երկաթի սուլֆիդը վերածել երկաթի սուլֆատի
- 4) կալցիումի սուլֆատը վերածել կալցիումի սուլֆիդի

38

Կատուների խայտարդետ գունավորումը (միմյանց հաջորդող սև և շեկ բծերով) բնորշ է միայն եզ կատուներին և պայմանավորված է X քրոմոսոմում գտնվող սև և շեկ գույները որոշող ալելային գեներով: Սև գույնը պայմանավորող գենը դոմինանտում է շեկ գույնը պայմանավորող գենի նկատմամբ: Ի՞նչ հավանականությամբ (արտահայտված տոկոսներով) շեկ արուի և խայտարդետ եզի սերնդում կարող են լինել սև կատուներ:

- 1) 75 %
- 2) 0 %
- 3) 25 %
- 4) 50 %

(39- 40) 5600 նուկլեոտիդներից քաղկացած ի-ՈՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդների 26 %-ը գուանինային է, 22 % -ը՝ ցիտոզինային:

39

Գտնել աղենինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՈՆԹ-ն:

- 1) 1344
- 2) 1456
- 3) 5824
- 4) 2912

40


Գտնել գուանինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՈՒՆԹ-ն:

- 1) 2464
- 2) 2688
- 3) 1456
- 4) 2912

41

Ստորև նշված նկարում բերված են սպիտակուցի երրորդային կառուցվածքի կարևոր կապեր և փոխազդեցություններ: Նշել, թե որ կապին և փոխազդեցությանը որ թիվն է համապատասխանում.

- ջրածնային կապ
- հիդրօֆոք և Վանդերվալյան փոխազդեցություններ
- իոնական կապ
- դիսուլֆիդային կամրջակ



42

Գտնել ողնաշարավոր կենդանիների նշված դասերի (նշված են աջ այունակում) և նրանց կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների (նշված են ձախ այունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Այունանահատկությունները

Դաս

- մաշկը մերկ է և խոնավ
- կմախրում ունեն պարանոցային, իրանային, սրբանային և պոչային բաժիններ
- կմախրում ունեն պարանոցային մեկ ող
- սիրտը երկխորշ է
- միզածորաններով մեզն անցնում է կոյանոց
- ունեն միայն ներքին ականջ
- ունեն արյան շրջանառության երկու շրջան
- սրտով հոսում է միայն երակային արյուն

- հասուն երկկենցաղներ
- ուլույին ձկներ

43

**Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ մասում) ո՞ր օրգանիզմին է բնորոշ (նշված են աջ մասում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.**

### Հատկանիշ

- A. ԴՆԹ-ն սպիտակուցի մոլեկուլների հետ համալիրներ չի առաջացնում
- B. ԴՆԹ-ն օղակաձև է և գտնվում է ցիտոպլազմայում ազատ վիճակում
- C. ունեն էնդոպլազմային ցանց, որին կարող են միանալ ոիբոսմները
- D. ունեն միտոքոնիլիումներ
- E. ունեն բջջապատ, որը պարունակում է մուռեին պեպտիդոգլիկան
- F. ԴՆԹ-ն գտնվում է կորիզում և շրջապատված է կրկնակի թաղանթով

### Օրգանիզմ

1. Էռուկարինոս
2. պրոկարիոտ

44

**Ո՞ր հորմոնը (նշված է աջ սյունակում) ի՞նչ ազդեցություն ունի (նշված է ձախ սյունակում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.**

### Հորմոն

- A. սոմատոտրոպին
- B. գլյուկագոն
- C. օրսիտոցին
- D. ինսուլին
- E. պրոլակտին
- F. առլենովորտիկոտրոպ
- G. կալցիտոնին

### Ազդեցությունը

1. իջեցնում է արյան մեջ կալցիումի մակարդակը
2. իջեցնում է արյան մեջ գլյուկոզի քանակը
3. բարձրացնում է արյան մեջ գլյուկոզի քանակը
4. իմթանում է արգանդի մկանների կծկումը
5. իմթանում է կաթի արտադրությունը
6. իմթանում է աճը
7. իմթանում է մակերիկամների կեղևի կողմից գլյուկորտիկորիդների ներգատումը

**45**

**Մարդու մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում)**  
**համապատասխանաբար ո՞ր բլթում է (նշված աջ սյունակում) տեղակայված:** Նշել  
**համապատասխանություններն ըստ հերթականության.**

**Կեղև գոտի**

- A. խոսքի
- B. ճշգրիտ շարժումների
- C. տեսողական ճանաչողության
- D. լսողության
- E. մաշկամկանային զգայության

**Մեծ կիսագնդերի կեղևի բիլթ**

1. քունքային
2. ճակատային
3. գագաթային
4. ծոծրակային

**46**

**Ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում ռետրովիրուսների վերարտադրման  
ստանդարտ ցիկլը: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. ավելանում է ԴՆԹ-ի երկրորդ՝ կոմպլեմենտար շղթան
2. առաջացած վիրուսային ԴՆԹ-ն, որը կրկնակի շղթա ունի, անցնում է բջջի կորիզ և ներդրվում է բրոմոսոմային ԴՆԹ-ի մեջ՝ դառնալով ալովիրուս
3. առաջացած նոր վիրուսները լրում են բջիջը և կարող են այլ բջիջների վարակել
4. հակադարձ տրանսկրիպտազը ՌՆԹ-ի կադապարն օգտագործում է ԴՆԹ-ի շղթա պատրաստելու համար
5. ալովիրուսը տրանսկրիպցիայի է ենթարկվում և թարգմանվում է վիրուսային սպիտակուցների

**47**

**Նշել բջջային ցիկլի փուլերի ճիշտ հաջորդականությունը.**

1. անաֆազ
2. ինտերֆազի G<sub>1</sub> փուլ
3. մետաֆազ
4. թելոֆազ
5. ինտեֆազի S փուլ
6. պրոֆազ
7. ինտերֆազի G<sub>2</sub> փուլ

**48**

**Ինչպե՞ս է տեղի ունենում ալերգիայի զարգացումը:** **Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. ալերգենի կրկնակի թափանցում և կապում գեր բջջի վրա գտնվող հակամարմիններին
2. ալերգենի կապում համապատասխան ընկալիչներ ունեցող B բջջին
3. հիստամինի արտազատում, որն ալերգիայի ախտանշաններ է առաջացնում
4. հակամարմինների մի մասի կապում գեր բջջների մակերևույթին գտնվող սպիտակուցների հետ
5. ալերգենի անցում արյան հոսք
6. B բջջների բազմացում և տվյալ ալերգենի նկատմամբ մեծ քանակությամբ հակամարմինների արտադրում

**49**

**Ինչպիսի՞ն է գեղձերի դասավորությունը մարդու օրգանիզմում՝ ներքեցից դեպի վերև:** **Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. մակերիկամ
2. ուրցագեղձ
3. ենթաստամոքսային գեղձ
4. ենթատեսաթումբ
5. սերմնարան
6. վահանաձև գեղձ

**50**

**Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում մկանների կծկման ժամանակ թելիկների սահումը:** **Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. ԱԵՖ-ի ճեղքումից միոգինային գլխիկի էներգիայի ստացում և ձևի փոփոխություն
2. ԱԵՖ -ի կապում միոգինային գլխիկին և ակտինի կապման հատվածից անջատում
3. միոգինային գլխիկի հետ թեքում դեպի էներգիայով աղքատ իր դիրքը
4. բարակ թելիկի ձգում դեպի սարկոմերի կենտրոնը
5. էներգիայով հարուստ միոգինային գլխիկի կապում ակտինի բացված կապման հատվածին
6. ուժային հարված և սահում

**51**

**Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում սննդի մաքսման ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. թաղանթանյութի ճեղքում հաստ աղիներում բնակվող մանրէների մասնակցությամբ
2. Փերմենտի ակտիվացում թթվի ազդեցության տակ
3. սննդի բարդ օրգանական մոլեկուլների ճեղքում թթվային միջավայրում
4. սննդանյութերի ներծծում բարակ աղիում
5. սննդի տեղափոխում կերակրափողով
6. սննդանյութերի ճեղքում հիմնային միջավայրում
7. սննդի մեխանիկական և քիմիական մշակում թույլ հիմնային միջավայրում

**52**

**Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հերթականությունը.**

1. փոշոտում
2. փոշեխողովակի առաջացում
3. սերմի առաջացում
4. սպերմիումի և ձվաբջի միաձուլում
5. միկրոսպորի առաջացում
6. փոշեխողովակի ներթափանցում սաղմնապարկ
7. գեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում

**53**

**Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.**

1. թրոմբոցիտները արյան ամենափոքր ձևավոր տարրերն են, քայլայվում են փայծաղում, ունեն կորիզ
2. ստամաքսակայութի բաղադրության մեջ մտնում է աղաթթու, պեպսին, տրիպսին և ամիլազ
3. կարճատեսության դեպքում ակնագունդը սովորականից կարճ է
4. հարթ մկանը ավելի դանդաղ է, կծկվում քան կմախքային մկանը
5. երկարավուն ուղեղը իրականացնում է ռեֆլեքսային և հաղորդող գործառույթներ
6. զգայական նեյրոնը, լսողական նյարդի միջոցով ուղեղին ուղարկում է գործողության պոտենցիալ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ՖԱԴ H<sub>2</sub>-ից փոխադրման շղթայով դեպի թթվածինն <<իջած>> յուրաքանչյուր էլեկտրոնային զույգ կարող է էներգիա տրամադրել ԱԵՖ-ի առավելագույնը 3 մոլեկուլի սինթեզին
2. ցիտոլինները ճնշում են բջիջների աճը
3. պենիցիլինը երկրորդային մետաբոլիտ է, այն արտադրվում է *Penicillium* կոչվող մանրադիտակային սնկերի կողմից
4. գել էլեկտրոֆորեզը դա մակրոմոլեկուլների տեսակավորման մեջող է՝ ըստ նրանց էլեկտրական լիցքի և չափերի
5. գլիկոգենը հանդիսանում է β-գլյուկոզի պոլիմեր
6. Էթիլեն գիկորի թրթնջկաթթվի փոխակերպման ռեակցիայի համար մրցակցային արգելակիչ է հանդիսանում էթանոլը
7. լուսային փուլի ռեակցիաները տեղի են ունենում միայն համապատասխան գունանյութերի առկայության դեպքում, որոնք կլանում են լույսի որոշակի ալիքի երկարություններ

## Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. Չրալույծ հորմոնները կարող են հատել ֆոսֆոլիպիդային երկշերտն և կապվել թիրախի բջջի ներսում գտնվող ընկալիչներին
2. առանցքային կմախքը մարմնի հենարանն է և ներառում է գանգատուվիք և ողնաշարը
3. Խլորթյունը առաջանում է միայն նեյրոնների վնասվածքի հետևանքով
4. Մկանայթելիկների բարակ թելիկները կազմված են ակտին սպիտակուցից, իսկ հաստ թելիկները կազմված են միոզին սպիտակուցից
5. Նիկոտինը գործում է որպես խթանիչ կապվելով և ակտիվացնելով ացետիլխոտին կոչվող նեյրոմիջնորդանյութի ազդեցությունը
6. յուտեհնիզացնող հորմոնը ճնշում է ձվարանների և սերմնարանների գործունեությունը
7. Վիտամին B<sub>1</sub>-ի պակասից առաջանում է ցինգա հիվանդությունը

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- ԱԵՖ-ի սինթեզը տեղի է ունենում ռիբոսոմներում
- հեմոֆիլիան սերի հետ շղթայակցված դոմինանտ հատկանիշ է
- Փերմենտների անշարժացման համար օգտագործում են նատրիումի ալգինատ
- քեմիկատերոտրոֆները այն օրգանիզմներն են, որոնք էներգիան ստանում են անօրգանական նյութերից
- պլեոտրոպիայի օրինակ է մանգաղաքջային սակավարյունություն հիվանդությունը
- մեկ կամ մի քանի հակարիտիկի հանդեպ կայունության գեն պարունակող պլազմիդը կոչվում է R պլազմիդ

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- ամիլոպեկտինը կազմված է 1,4 կապով միացած  $\beta$ -գլյուկոզի բազմաթիվ մոլեկուլներից
- ռեկոմբինանտ առանձնյակների տոկոսային պարունակությունը ամբողջ սերնդում կոչվում է ռեկոմբինացիայի հաճախականություն
- կոհեզիան և աղիեզիան միասին ստեղծում են մեկը մյուսի և քսիթմի խողովակի ներքին պատերին կազող ջրային մոլեկուլների շարունակական հոսք
- կոլագենը լուծելի ֆիբրիլյար սպիտակուց է
- Փոտոտրոպիզմը բույսի ընձյուղի ուղղորդված աճն է ի պատասխան լույսի
- բջջաթաղանթը ֆոսֆոլիպիդային մոլեկուլների մեջ շերտ է

**Ունենք չորս փորձանոթ:** Առաջին փորձանոթի մեջ լցված է գյուկոզ, 2-րդ փորձանոթի մեջ օսլա, 3-րդ փորձանոթի մեջ սախարոզ, իսկ 4-րդ փորձանոթի մեջ կարտոֆիլի քերուկ: Բոլոր փորձանոթների մեջ ավելացրել են յոդի լուծույթ: Նշել, բոլոր այն փորձանոթների համարները, որոնցում կառաջանա կապտասև գունավորում:

- (59-60) Էկոհամակարգ մտնող էներգիայի միակ աղբյուրն Արեգակնային լույսն է, որի գումարային էներգիան մեկ տարվա ընթացքում կազմում է  $3,2 \cdot 10^8$  կՋ:  
Ֆուտոսինթեզի օգտակար գործողության գործակիցը հավասար է 1,6%:  
Էկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝ բույսեր - բուսակեր կենդանիներ - գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ:

59

Քանի՞ մակարույժ կարող է սնվել տվյալ համակեցության գիշատիչների հաշվին, եթե մեկ մակարույժի զանգվածը 1 գ է, իսկ մակարույժների 1 կգ գումարային զանգվածում պարունակում է  $4 \cdot 10^4$  կՋ էներգիա: Ընդունել, որ յուրաքանչյուր մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 10%-ը:

60

Որոշել էներգիայի կորուստը (կՋ) սննդան շղթայի գիշատիչներ - գիշատիչ մակարույժներ օղակում:

- (61-63) Գլուկոզի ճեղքումից հետո օրգանիզմում մնացել է 32 մոլ կաթնաքրու, և քրվածնային փուլի էներգիայի կորուստը կազմել է 27360 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԵՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

61 Զանի<sup>o</sup> մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում:

62 Զանի<sup>o</sup> կՋոուլ օգտակար էներգիա է կուտակվել ԱԵՖ-ի ձևով անբրվածին փուլում:

63 Զանի<sup>o</sup> կՋոուլ է կազմում էներգիայի կորուստը անբրվածին փուլում:

- (64-66) Օրվա ընթացքում մաշկի մակերևույթից ջերմահաղորդման ուղիով հեռացվել է 7350 կՎ ջերմային էներգիա: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից ջերմաճառագայթման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 60%-ը, գոլորշիացման միջոցով՝ 20%-ը, ջերմահաղորդման միջոցով՝ 15%-ը: Հաշվի առնել, որ 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

64

Քանի՞ կօգուլ ջերմային էներգիա է ճառագայթվել այդ ընթացքում:

65

Քանի՞ միլիգրամ քրտինք է հեռացվել մեկ քրտնագեղձով:

66

Քանի՞ գրամ քրտինք կգոլորշիացվեր մաշկի մակերևույթից, եթե մաշկով հեռացվող ամբողջ ավելցուկային ջերմային էներգիան ծախսվեր քրտնարտադրության համար:

(67-68) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 16 ժամ, ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 6 ժամ: Աշխատանքի ժամանակ մարդու սրտի կծկումների հաճախականությունն ավելանում է 2 անգամ, յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալն աճում է 1,5 անգամ, շնչառական շարժումներն արագանում են 2 անգամ, յուրացվող թթվածնի ծավալն աճում է 25%-ով, իսկ շնչառական օդի ծավալը՝ 1,6 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մեկ րոպեի ընթացքում արթուն ժամանակ մարդը կատարում է 18 շնչառական շարժում, սիրտը կծկվում է 70 անգամ և յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 70 մլ արյուն:

67

Քանի՞ լիտր արյուն է արտամղվել առրտա արթուն ժամանակ:

68

Քանի՞ լիտր թթվածին է յուրացվել օրգանիզմում մեկ օրվա ընթացքում:

**69**

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել "Ճիշտ է", "Սխալ է", "Զգիտեմ" պատասխաններից մեկը.**

1. խոցերի մեծ մասի պատճառը ստամոքսի ներքին մակերևույթի վարակումն է *Helicobacter Pylori* թթվակայուն բակտերիայով
2. լեղին պարունակում է մարսողական ֆերմենտներ, որոնք խթանում են նեխման գործընթացները
3. Փիբրոզային շարակցական հյուսվածքի շերտի բջիջները կոտրվածքի դեպքում կարող են առաջացնել նոր բջիջներ
4. պրոստագլանդինները տեղային կարգավորիչներ են, որոնք զգայականացնելով ցավի ընկալիչները ուժեղացնում են ցավը
5. թարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորուրեյունը
6. միզագոյացման հումորալ կարգավորումն իրականացնում են մակերիկամի միջուկային շերտը և ենթաստամոքսային գեղձը

**70**

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել "Ճիշտ է", "Սխալ է", "Զգիտեմ" պատասխաններից մեկը.**

1. սուկցեսիան, որը սկսվում է մերկ ժայռերի վրա, որտեղ բացակայում է հողը կոչվում է երկրորդային
2. ալոպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի առաջացումն է առանց աշխարհագրական մեկուսացման
3. սիմպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում
4. օրգանիզմները բաց կենսաբանական համակարգեր են
5. կենսաբանական արտադրանքը նկարագրվում է, որպես կենսագույնական պատճառ է ներգիայի հոսքի և նյութերի շրջապտույտի հավասարակշռվածությունն է
6. բնական էկոհամակարգերի կայունության հիմնական պատճառն է ներգիայի հոսքի և նյութերի շրջապտույտի հավասարակշռվածությունն է